Սիրէ՛, բուլբուլիկ, քո վարդն անուշիկ:

— Ինչ՛ գեղեցիկ երգ է, ինչպէ՛ս լաւ երգում են, — նկատեց երեցփոխանը: — Առաջնորդը շատ է սիրում այդ երգը:

Չգիտեմ ի՞նչ սիրելու բան կար այդ անկապ, անմիտ երգի մէջ, որը երգում էին չափազանց անախորժ եւ անճոռնի եղանակով, — այդ, ի հարկէ, չբացատրեց ինձ երեցփոխանը, — բայց ինձ զարմացրեց նրա մի այլ նկատողութիւնը, երբ պատոելին հեռանալուց յետոյ ասաց.

— Իր կշեռքով ոսկի արժէ այդ մարդը: Այն օրից, որ ուսումնարան է բաց արել, մեր որդիքը շէնք ու շնորհք են ստացել: Առաջ կապելու գժեր էին, հիմա գառնուկի նման խեղճացել են, ձայն չեն հանում, կարծես բերաններում լեզու չկայ:

— Ճշմարի՞տ էք ասում, — հարցրի ես:

— Սուտ ասելու ի՞նչ շահ ունեմ, — պատասխանեց նա վիրաւորուածի նման: — Հէնց որ երեխան տանը մի ծպտուն է հանում, բաւական է, որ մայրն ասէ՝ վարժապետիդ կը յայտնեմ, նա իսկոյն սկսում է դողալ եւ լեզուն քաշել:

Դարձեա՛լ սարսափ, դարձեա՛լ երկիւղ: Ես մտաբերեցի իմ մօրը եւ տէր Թոդիկի դպրոցը: Փաշայից, առաջնորդից պէտք է վախենան, որ նրանց հնազանդ լինեն, որ վատ գործ չգործեն: Վարժապետից պէտք է վախենան, որ բան սովորեն եւ իրանց լաւ պահեն...

Մեր խօսակցութիւնը դարձեալ ընդհատուեցաւ: Մեր մօտովն անցաւ մի այլ խումբ: Մի բաւական լաւ հագնուած մարդու շրջապատել էին մի խումբ երիտասարդներ. առջեւից գնում էին սազ եւ սանթուր ածողները, ամբողջ խումբը խառնաձայն երգում էր: Այդ սրիկաները, դեռ իրանց ուրախութեան սեղանը չկազմած, արդէն արբած էին: Արաղի շշերը իրանց հետ էին տանում եւ ճանապարհին խմելով էին գնում:

Իմ մօտ նստողները երեքն էլ ոտքի ելան եւ հեռուից ձայն տուին.

— Բարո՛վ, Մինաս աղա, միշտ այդպիսի ուրախութեան մէջ լինես:

Մինաս աղան, որը այն լաւ հագնուած մարդն էր, գլխով շնորհակալութիւն յայտնեց, խումբը հեռացաւ:

— Ո՞վ է այդ Մինաս աղան, — հարցրի ես:

Թաղական խորհրդի անդամը, փոխանակ իմ հարցին ուղղակի պատասխանելու, ասաց.

— Պոլսից նոր է եկել, շատ փող է բերել:

— Եւ հիմա շռայլում է: